ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 դեկտեմբերի 2023 թվականի N 2156-Ա

ՏԱՐԱԾՔՆԵՐ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ և 7-րդ մասերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող՝ քաղաք Երևան, Արաբկիր, Այգեձորի փողոց 67 շենք, թիվ 2 հասցեում գտնվող վարչաարտադրական շինության 2-րդ հարկից 436.4 քառ. մետր մակերեսով տարածքը, որից 98.6 քառ. մետր մակերեսով տարածքն ընդհանուր է (այսուհետ՝ տարածք 1), հետ վերցնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից:

2. Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող՝ քաղաք Երևան, Արաբկիր, Այգեձորի փողոց 67/5 հասցեում գտնվող վարչաարտադրական շինության 2-րդ հարկից 220.1 քառ. մետր մակերեսով արտադրական մասնաճյուղը (այսուհետ՝ տարածք 2) հետ վերցնել Հայաստանի Հանրապետության միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեից:

3. Սույն որոշման 1-ին և 2-րդ կետերում նշված տարածք 1-ն ու տարածք 2-ն ամրացնել Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեին:

4. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին և Հայաստանի Հանրապետության միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի նախագահին՝ Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի հետ համատեղ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում իրականացնել սույն որոշման 1-ին և 2-րդ կետերում նշված տարածք 1-ի ու տարածք 2-ի հանձնման-ընդունման աշխատանքները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

14.12.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ